

սուսի արեամբ (անդ, 1906, էջ 1197): Անշուշտ այս նպատակով ալ արիւնն հաւարեցնելով տուն կը տանէին, եւ զոր մինչեւ իսկ կ'ոռակին իբրեւ սրբազան բան մը, որով Շնորհալին կը հարկադրի արգելուլ զայդ, պիղծ յայտարարելով արիւնը (Ընդհ. 160): Այս սովորութեան կ'ակնարկէ նոյն դարու մեր առակախօսն ալ, ըսելով՝ թէ աղուէսը մատաղաց զենման ժամանակ «գարիւնն եւս լեզոյր». եւ երբ կը մեղադրէին զինքը, պատասխանեց. «Նուիրեալ է եւ այդպէս արժան է առնել» (Գոշ՝ Առկ. 84): Հայոց այս խնդրոյ մասին ունեցած հակաճառութիւնն է՝ զոր կը ներփակէ Մխիթար այս առակին մէջ:

Լամբրոնացւոյն Յունաց հետ ունեցած անվաւեր վիճարանութեան մէջ անոնք կ'ամբաստանեն՝ թէ Հայք խաչերն ալ՝ զորս կ'օրհնեն, «գառին արեամբ մկրտեն»: Մեր ջատագովը փոխանակ ժխտելու՝ փախրատեան պատասխան մը կու տայ, ըսելով՝ թէ այդպիսի «նանիր քննութեամբ» մեր աշխարհը ձեզմէ հեռացուցեր էք (Լմբ. Գսպ. 16): Եւ ասով կը հաստատէ մանաւանդ եղած ամբաստանութիւնը:

8. — Կարմիր օռ: — Եթէ միջին դարուն մօտենայինք մեր հարց գատկական սեղանին, անոր վրայ գառին հետ պիտի